

մից անմիջապես հետո պետք է մտածի երկու հուշարձան կառուցելու մասին՝ դամբարան իր և տանար՝ աստվածների համար:


— Միանգամայն ճշմարիտ է,— պատասխանեց փարավոներ,— ես արդեն շատ անգամ եմ մտածել դրա մասին, բայց ֆանի որ փող չունեմ, չեմ շտապում կարգադրություններ անել: Ռոպկեան,— շարունակեց նա աշխույժով,— եթե ես կառուցեմ, պետք է որեւէ հոյակապ բան կառուցեմ, այնպիսի մի բան, որ եզրիպտոսին ստիպի հիշել ինձ:

— Դու ցանկանում ես բո՛ւրգ կառուցել:

— Ո՛չ: Չէ որ աշխարհը չի կարող Քեֆիսի բուրգից մեծ բուրգ կառուցել և Թեբեի, Ամոնի տաճարից մեծ տաճար: Իմ բազավո-

րությունը շատ է քույլ այդպիսի վիրիսարի գործեր անելու համար...

Քեֆիսի բո՛ւրգ... հազարավոր ֆաբերը պետք է զբաղակալեին փարավոնի մոմիան և նրա անդրշիրիմյան պալատը: Սակայն բուրգի մոտոֆր սերունդներից զաղտնի պաֆելու համար գործադրված ճարտարապետական բոլոր հնարքներն ապարդյուն անցան: Կյանքը ցույց տվեց, որ բուրգերի վիրիսարիությունը ոչ քե վախեցնում է հետագա կուլուպտողներին, այլ ընդհակառակը, նրանց ինչ-որ բանով զայրակեցնում, զբաղում է: Նրանց մեծությունը և խորհրդավորությունը ասում էին, քե այդտեղ ինչ-որ բան կա քաֆ-ցըրած:



ՕՐԱՅՈՒՅՅԻ

ՆՈՐ

ՆԱԽԱԳԺԵՐ

Տարվա մեջ լրիվ օրերի քանակը հավասար է 365-ի: 365-ը առանց մնացորդի բաժանվում է միայն 5-ի և 73-ի վրա: Նշանակում է տարին մասերի՝ ամիսների բաժանելիս, եթե ցանկանում եմք, որ այդ մասերը պարունակեն հավասար քվով օրեր, ապա պետք է բաժանել կամ 5 և կամ 73 մասի: Առաջին դեպքում ամիսները շատ երկար կլինեն, իսկ երկրորդ դեպքում էլ՝ շատ կարճ: Այսինքն երկու դեպքում էլ գործածությունը համար հարմար չեն լինի: Ուրեմն ամիսները կամ պետք է ունենան ոչ հավասար քանակությամբ օրեր, կամ էլ

հավասար, բայց վերջում պետք է լինեն մնացորդ օրեր: Պատմությանը հայտնի են քե՝ մեկ և քե՝ մյուս տիպի օրացույցեր: Այսպես, հին հայկական օրացույցը պարունակում է 12 ամիս 30-ական օրով և ավելյաց ամիս՝ 5 օրով: Ոչ հավասար մասերի բաժանման դեպք ունենալ հին հռոմեական օրացույցում, որը որոշ փոփոխություններով այժմ օգտագործվում է աշխարհի բնակչության ճշգրտ մեծամասնության կողմից, քե այն ըստ երևույթին պետք է համարել մարդկության պատմությանը հայտնի

օրացույցերի վատագույններից մեկը:

Ժամանակակից օրացույցն ունի հետևյալ հիմնական բերությունները.

1. Ամիսները հավասար քանակությամբ օրեր չեն պարունակում (օրերի քվով փոփոխվում է 28—31-ի սահմաններում).

2. Տարվա առաջին և երկրորդ վեց ամիսների տևողությունները իրար հավասար չեն (առաջին վեց ամիսը կազմում է 181, երկրորդը՝ 184 օր).

3. Նոստայակները հավասար տևողություններ չունեն (պարունակում են 90—92 օր).

4. Ամիսները կրում են աստվածների (հունվար, փետրվար, մարտ, մայիս, հունիս) ու քաղաքների (հուլիս, օգոստոս) անուններ, իսկ մի մասն էլ համարներ են, որոնք չեն համապատասխանում տարվա մեջ երանց ունեցած կարգին (սեպտեմբեր նշանակում է 7-րդ, հոկտեմբեր՝ 8-րդ, նոյեմբեր՝ 9-րդ և դեկտեմբեր՝ 10-րդ).

Հետագայում փարավոնները իրենց ան-
յորշիրմյան կյանքը ընդհատակ տեղափո-
խեցին: Ժողովրդի աչքից հեռու պահելու
համար հարկ եղավ կառուցել արդեն ստո-
րերկրյա դամբարաններ, որոնց մուտքը
նույնպես փակում էին մեծ գաղտնապահու-
թյամբ: Ավանդությունը պատմում է, որ փա-
րավոնի անգուր հսկիչներն ու զինակիցները
մուտքը փակողներին ոչնչացնում էին: Իհա-
կե դա էլ չօգնեց: Նդան դամբարաններ, որ
կողոպտվեցին դեռ վաղ անցյալում, եղան՝
որ հայտնաբերվեցին նոր ժամանակներում:
Վերջիններից առավել երևելիս հանդիսացավ
Բուրանխամոնի դամբարանը Արֆաների
նովտում՝ Լուխորից ոչ հեռու:

Քե՛ր բուրգերը, և թե մյուս հուշարձաննե-
րը մարդկանց զարմանք են պատճառում
իրենց շափսերով ու վեհությամբ: Առավել
ափսոսական են բուրգերը, որոնցում սիմվո-
լացված է կեդրոնական ամբողջ երկիրը: Նը-
րանք, ասես արթուն հսկում են անասպատը
և Նեղոսը:

Արհամարհելով դարերի ընթացքը, բուր-
գերն ապրեցին ավելի երկար, քան շատ ժո-
ղովուրդներ, քաղաքակրթություններ, կրոն-
ներ, միանգամայն արդարացնելով արարա-
կան ասացվածքը. «բոլոր վախենում են
ժամանակից, իսկ ժամանակն էլ բուրգերից»:

(Շարունակելի)

5. Ամիսներ առանց մնացոր-
դի 7-ի վրա չեն բաժանվում. դը-
րա հետևանքով դժվարանում է
շարքավա օրերի որոշման խնդիրը.

6. Տարվա սկիզբը աստղագի-
տական հիմնավորում չունի և չի
կապված որևէ նշանավոր դեպքի
կամ իրադարձության հետ.

7. Տարեթվերի հաշվման հա-
մար որպես սկիզբ ընդունված է
Քրիստոսի «ծննդյան» օրը, մի
անձնավորություն, որի գոյությունը
պատմականորեն հերքված է:

Այս բերությունները բավակա-
նին դժվարացնում են նման օրա-
ցույցի գործածությունը ժամանա-
կագրական տարբեր հարցեր լու-
ծելիս և մասնավորապես մեծ
դժվարություններ են առաջաց-
նում ժողովրդական տնտեսության
պլանավորման ժամանակ: Այդ
պատճառով էլ օրացույցի բարե-
փոխման հարցը առ այսօր էլ մշ-
նացել է գիտնականների ուշա-
դրության կենտրոնում:

Առաջին անգամ այս հարցը
միջազգային մասշտաբով դրվեց
1923 թվականին. երբ Ազգերի Լի-
գային կից ստեղծվեց օրացույցի

ռեֆորմի կոմիտե: Ավելի ուշ բազ-
մաթիվ երկրներում կազմվեցին
հատուկ հանձնաժողովներ, որոնք
պետք է հավաքեին օրացույցի
նոր նախագծեր:

Նոր օրացույցի նախագծերի
հաշվարկ հասավ մի քանի հար-
յուրի, սակայն երե հաշվի շառ-
նենք առանձին տարբերություն-
ներ. դրանք հիմնականում բա-
ժանվում էին երկու խմբի: Մի
խմբում տարին բաժանվում էր 13,
մյուսում՝ 12 ամսվա:

13-ամսյա օրացույցում տարին
բաղկացած էր 28-ական օր պա-
րունակող 13 ամսից: Ամիսն ու-
ներ չորս լրիվ շաբաթ, այսինքն
ամսվա յուրաքանչյուր ամսաթվի
համապատասխանում էր որոշակի
շաբաթվա օր (մասնավորապես
առաջարկվում էր ամիսներն ըս-
կրեսել կիրակիով և վերջացնել շա-
բաթով): Բայց $13 \cdot 28 = 364$: Մնա-
ցորդ մեկ օրը ենթադրվում էր
զենել տարվա վերջում, այն հաշ-
վի մեջ չմտցնել, համարել ոչ աշ-
խատանային՝ «նոր տարվա օր»:
Նահանջ տարիներին նման լրա-

ցուցիչ օր մտցվում էր նաև տար-
վա մի այլ ամսվա սկզբին:

Նախագծերի մյուս խմբում
տարին բաժանվում է 12 ամսվա՝
4 եռամսյակի: Յուրաքանչյուր
եռամսյակի առաջին ամիսը պա-
րունակում է 31 օր, իսկ հաջորդ
երկու ամիսները՝ 30-ական օր:
Այստեղ ամիսները առանց մնա-
ցորդի 7-ի վրա չեն բաժանվում,
ուստի և բոլոր ամիսների նույն
ամսաթվերին շաբաթվա միևնույն
օրը չի համապատասխանում. սա-
կայն այն ճիշտ է ըստ եռամս-
յակների: Այսպես. եռամսյակի ա-
ռաջին ամիսն սկսվում է երկու-
շաբթով և վերջանում է շուբե-
շաբթով. երկրորդ ամիսն սկսվում
է հինգշաբթով և վերջանում ուր-
բաթով, իսկ երրորդ ամիսը սկս-
վում է շաբաթով և վերջանում
կիրակիով: Յուրաքանչյուր եռա-
մսյակ պարունակում է 91 օր, տար-
վա կեսը՝ 182 օր: Հասարակ
տարիներին այստեղ ևս ղեկունե-
րից հետո մտցվում է «նոր
տարվա օր» իսկ նահանջ տարի-
ների երկրորդ լրացուցիչ օրը նո-
րից համարվում է ոչ աշխատան-



ԳԱՆԻՆԵՈ ԳԱՆԻՆԵՑ

1964 թվականի փետրվարի 15-ին լրացավ իտալացի մեծ գիտնական՝ ֆիզիկոս, աստղագետ ու փիլիսոփա Գալիլեո Գալիլեյի ծննդյան 400-ամյակը: Հաշվի առնելով նրա մեծ ծառայությունները գիտության պարզացման մեջ, ինչպես նաև նրա անխոնջ ու համառ պայքարը միջնադարյան սխոլաստիկայի ու դոգմատիզմի դեմ, միջազգային խաղաղության կոմիտեի որոշմամբ այդ տարելիցը նշվեց համաշխարհային մասշտաբով:

Գալիլեյը ծնվել է 1564 թվականին Դիլեյում (Իտալիա) երաժշտի ընտանիքում: Նրա բազմակողմանի տաղանդը շատ վաղ է հայտնաբերվում: Դպրոցում և մի քանի տարի հոգևորական ուսումնա-րանում սովորելուց հետո, հոր խորհրդով, Գալիլեոն 17 տարեկան հասակում ընդունվում է համալսարանի բժշկական բաժինը: Սակայն Գալիլեյին այլ բան էր վիճակված: Ծանոթանալով ֆիզիկայի դասընթացին նա մեծ հետաքրքրություն է ցու-

ցաբերում դեպի ճշգրիտ գիտությունները: Մի կողմ թողած իրեն առաջարկված մասնագիտությունը, ավելի հաճախ է մասնակցում ֆիզիկայի ու մաթեմատիկայի դասախոսություններին: Վերջապես, ստանալով հոր համաձայնությունը, մեկընդմիջտ հրաժեշտ է տալիս բժշկությանը: Սակայն նյութական ծանր պայմանների հետևանքով Գալիլեյին չի հաջողվում ավարտել համալսարանական լրիվ դասընթացը: Այդ բացը նա լրացնում

հային օր, անվանվում է «տարվա միջին օր» և մտցվում հունիսի 30-ի և հուլիսի 1-ի միջև:

13 ամիս պարունակող օրացույցի դրական կողմերից է այն, որ ամիսները հավասար բաժանվում են պարունակում, նրանք առանց մնացորդի բաժանվում են շաբաթվա օրերի քվի վրա, սակայն 13-ը պարզ քիվ է և հավասար բաժանվում ամիսներ պարունակող մասերի չի բաժանվում: 12 ամիս պարունակող տարին բաժանվում է 2, 3, 4 և 6 մասերի, մի բան, որը ժողովրդական տնտեսության պլանավորման և փինակագրության համար կարևոր նշանակություն ունի: 12-ամսյա օրացույցը հեշտ է նաև կապել նախկին օրացույցի հետ, սա էլ կարևոր է պատմագիտական առումով: Եվ վերջապես

մարդկանց համար ավելի սովորական է 12, քան 13 ամսյա օրացույցը:

Քեև նշված նախագծերը ժամանակակից օրացույցի նկատմամբ ունեն որոշակի առավելություններ, դրանք ևս լրիվ կերպով չեն վերացնում այժմյան օրացույցի բերությունները: Մասնավորապես ամիսների անունները, տարեսկիզբը և տարեթվերի հաշվման սկիզբը մնում են նույնը: Մի բանի խոսք այդ հարցերի վերաբերյալ:

Պատմությամբ հայտնի լավագույն օրացույցերում ամիսների անունները կապված են եղանակի կամ գյուղատնտեսական աշխատանքների հետ: Քեև՝ մեկը և քե՝ մյուսը կիրառելի է ավելի երկրի համար, բայց միջազգային օրացույցում այն անընդունելի է, քան

նի որ տարբեր երկրների շրջանին պայմանները և գյուղատնտեսական զբաղմունքի նյութերը տարբեր են:

Տարբեր օրացույցերում ընդունված տարեսկզբներից ըստ երեւոյքին ամենահարմարն այն է, որտեղ տարեսկիզբը կապվում է աստղագիտական դատայի՝ զարնանային գիշերանավասարի օրվա (աստղագիտական զարնան սկսվելու) հետ: Մանավանդ որ բազմաթիվ ազգեր մի ժամանակ ղեկավարվել են այդպիսի օրացույցով և այդ անցումը նրանց համար միանգամայն հեշտ կլինի:

Դարաշրջանների հաշվման բարձրագույնը բնորոշությունը շատ ավելի դժվար խնդիր է: Այստեղ պատմությունն էլ չի կարող օգնել: Եվ իրոք, հայտնի օրացույցային դա-

է ինքնապարգացմամբ, միաժամանակ ըզբաղվելով գիտական գործունեությամբ: Գալիլեյը պատրաստում է հիդրոստատիկ կշեռք, որի օգնությամբ հեշտությամբ որոշվում էր մետաղական համաձուլվածքի բաղադրությունը: Իսկ մարմինների ծանրության կենտրոններին վերաբերող աշխատությունը Գալիլեյին առաջին ճանաչումն է տալիս գիտական աշխարհում: Նրան նշանակում են մաթեմատիկայի ու աստղագիտության պրոֆեսոր:

Երկարատև տարիների գիտական սրբապաշտման արդյունքը լինում է այն, որ Գալիլեյը բոլորովին նոր ճյուղեր է ստեղծում ֆիզիկայում: Դրան մեծ չափով օգնում է գիտնականի ընտրած ճիշտ մեթոդը: Նրա համար ոչ մի դոգմա, հեղինակություն գոյություն չունեւ, ամեն մի դրույթ նա ընդունում էր որպես պոստուլատ, որի ճշտության մեջ ցանկանում էր ինքը անձամբ համոզվել: Այդ ճանապարհով նա հերքեց արիստոտելյան դոգմաները բացարձակ թեթև էլե-

մենտների գոյության վերաբերյալ՝ չափելով այդպիսին համարվող օդի տեսակարար կշիռը, համոզվեց, որ վայր ընկնող մարմնի անցած ճանապարհը (կամ անկման ժամանակամիջոցը) հաստատուն է և ոչ թե կախված մարմնի կշռից: Հետաքրքրական արդյունքներ ստացավ թեք հարթությամբ ընկնող մարմինների, հավասարաչափ արագացող շարժումների ուսումնասիրությունից: Համոզվելով այն բանում, որ ճոճանակի տատանման պարբերությունը անկախ է նրա ամպլիտուդայից և կշռից, ցանկացավ այն օգտագործել ժամացույցային մեխանիզմների պարբերական շարժումների համար. այդ իդեան ավելի ուշ իրագործեցին նրա որդին ու աշակերտներից մեկը: Գալիլեյը ձևակերպեց մեխանիկայի (դինամիկայի) հիմնական սկզբունքները, որոնք հետագայում ճշգրտվեցին ու մշակվեցին

բաշխմանը հաշվվել են ըստ բազմաթիվությունների. 60-ական տարվա ցիկլերի, եկեղեցիների, տաճարների կամ բաղաձևների հիմնադրման, մտացածին անձնավորության ծննդյան օրվա, աշխարհի «ստեղծման» և կամ քեռիկ երկրում կատարված հեղափոխության տարեթվի և այլն: Իհարկե դրանցից ոչ մեկը միջազգային մասշտաբով հավանության չի արժանանա: Պետք է ընտրել պատմական կամ աստղագիտական այնպիսի մի դեպք, կամ իրադարձություն, որը բոլորի համար ընդունելի և կարևոր լինի: Ըստ երևույթին մեծ քվերից խուսափելու համար դրանք հետագայում կփոփոխվեն. սակայն այժմ վատ չէր լինի եթե օրինակ, տարեթվերը սկսեին 1957 թվականի հոկտեմբերի 4-ից՝ դարաշրջանը

անվանելով «տիեզերքի նվաճման դարաշրջան»:
Օրացույցի ռեֆորմի Կոմիտեն հենարկեց ու հաստատեց 12 սյուսյա օրացույցը (ամսանունները, տարեթվերը և տարեթվերի հաշվման սկիզբը բողոքելով նույնը), սակայն ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան այն չհաստատեց, քանի որ որոշ պատվիրակներ, մասնավորապես անգլիական ու ամերիկյան պատվիրակները դրան դեմ դուրս եկան՝ պատճառաբանելով, որ տարվա մեջ մեկ կամ երկու օր հաշվի մեջ չմտցնելը խախտում է եկեղեցական տոների արարողության կարգը: Հատկապես «Վերդոմունտ» էին արտահայտում այն բանի համար, որ Քրիստոսի «հարությունը» կարող է կիբակից տեղափոխվել մի այլ օր:
Տարբեր երկրների միջև տնտե-

սական ու դիվանագիտական կապերի առկայությունը հնարավորություն չի տալիս առանձին մեկ կամ մի քանի երկրներում նոր օրացույցի անցնել: Այն պետք է լինի միայն ընդհանուր համաձայնությամբ՝ միջազգային մասշտաբով: Մարդկանց ավելի ու ավելի շատ խավեր են հանգում այն եզրակացության, որ անհրաժեշտ է անցնել ժամանակակից գիտության ու տեխնիկայի զարգացմանը համապատասխանող հարմար օրացույցի: Անկասկած է այն, որ վաղ քե ուշ տարիների հաշվման սխալներ կազմավորվել կրոնական այս կամ այն նախապաշարունակներից և մարդկությունը կանցնի նոր ու հարմար օրացույցի:

Բ. Թ.